

Յետ-խորհրդային  
հայ թատրոնը և  
համաշխարհային  
գրականությունը



## Գրական քննադատությունը եւ համեմատութեան մօտեցումը

- Չգտիլ
- Ընդօրինակել
- Նմանիլ
- Նմանցնել (Յակոբ Պարոնեան եւ  
Զապէլ Ասատուր)

Լուսանցքային  
գրական մշակոյթ  
մը կրնա յ գրուցել  
համաշխարհայի  
ն գրականութեան  
հետ:

- Հայ գրականութիւն որպէս լուսանցքային մշակոյթ
- Համաշխարհային գրականութեան տեսութեան կողմէ անտեսուած, բայց անկասկած կ'ազդուի այս տեսութենէն
- Տարածուած մօտեցումը՝ առնել գիտութիւնը արեւմտեան կամ ռուս գրականութեան մասին եւ զայն գործածել հայ գրականութիւնը հասկնալու համար:
- Արդեօք ուրիշ մօտեցումներ կարելի՞ են:

Համաշխարհային  
գրականության  
ժամանակակից  
տեսություններ

- Կարենալ աւելի ըսել, աւելի շատ (բոլոր) մշակոյթներու մասին
- Ներառականութիւն (inclusivity) կը խոստանան, բայց կ'անտեսեն ամենափոքր լեզուներու գրականութիւնը կամ կը ջնջեն զանոնք կարդալու կարիքը
- Franco Moretti's *Distant Reading* (2013): “The more ambitious the project, the greater must the distance [from the text] be.”
- Pascale Casanova's *The World Republic of Letters* (2004) տիեզերական անկախ գրական տարածքներ եւ ազգային/քաղաքական գրականութիւն
- Aamir Mufti's *Forget English! Orientalisms and World Literatures* (2016): “World literature has always been a border regime, an implicit set of regulations governing the mobility of various national and local literatures across the world.”

Յետ-խորհրդային  
գրականության  
և թատրոնի  
ընդհանուր  
պատկեր

- Խորհրդային Միության փլուզումով, գրականությունը կը կորսցնէ իր միակ հովանաւորը (Ճնշիչ)
- Քիրք գրելը եւ տպագրելը այլեւս տնտեսապէս կայուն գործ չէ, բայց ամէն տեսակ գործ կը տպուի
- Տպաքանակները ծայրայեղօրէն կ'ազդուին՝ հազարաւոր օրինակներէ 500 օրինակի: Այսօրուան տպաքանակները՝ 300
- Թատրոնը կը մնայ գրականության կարելորագոյն ոլորտներէն մէկը (հանդիսատեսներու թիւը ընթերցողներու թիւէն աւելի է)
- Բոլոր յաջողած թատերագիրները նաեւ արձակ կը գրեն / համեմատութիւն սփիւռքի հետ (Վահէ Պերպերեան)

Ոճի, ձևերու եւ  
նիւթերու  
այլազանութիւնը

- Պատմական նիւթեր
- Ժամանակակից հարցեր (ազգային, ընտանեկան, ընկերային)
- Վերացական կամ փիլիսոփայական նիւթեր
- Մենախօսութիւններ, երկխօսութիւններ
- Ողբերգա-կատակերգութիւն
- Իրապաշտ
- Հոգեբանական
- Անհեթեթ, հակա-տրամա

Ինչպե՞ս  
բացատրել  
անհեթեթի  
թատրոնին  
բարգաւաճումը:

- Մինչեւ 80ական թուականները անհեթեթի թատրոնը կարելի չէր ներկայացնել Խորհրդային Միութիւնէն ներս
- Յապաղած փորձ անհեթեթի թատրոնը հայ գրականութեան մէջ կայացնելու
- Բայց ինչո՞ւ անմիջապէս Խորհրդային Միութեան փլուզումէն առաջ, անմիջապէս ետքը եւ մինչեւ մեր օրերը:
- Ինչո՞ւ այսքան տարածուած է:
- յետ-խորհրդային անհեթեթը առիթ կը ստեղծէ որ վերստին քննարկենք անհեթեթի մեր ըմբռնումը:

## Անհերթի յատկանիշները

- Տիպարները որոշ տեսակ(էտ) կամ կեցուածք կը ներկայացնեն (եւ ոչ հոգեբանական բարդ անհատականութիւն)
- Յստակ չէ թէ որ տիպարները դրական են, որոնք ժխտական. Տրամաբանականութեան վրայ հիմնուած չեն
- Խօսակցութիւնները անհասկնալի են
- Մտաւորական կամ գաղափարական հարցերը լուծում չունին
- Ներկայացման ընթացքը կը կրկնուի կամ հերթականութիւնէ գուրկ է
- Ի՞նչ կը պատահի եւ ոչ՝ յետոյ ի՞նչ պիտի պատահի
- Մարդու կացութիւնը յոռետես կամ անյոյս տեսակէտէ
- Տիպարներուն որոշումները, փափաքները եւ խօսակցութիւնները պատահական են (**arbitrary**)
- Ինքնագիտակից (**self-reflexive**), կը մերկացնէ թատրոնը
- Վերլուծութեան դէմ խոչընդոտ կը հանդիսանան
- Վայրը անորոշ է (**vague**)



Ի՞նչ  
կարտայայտ  
անհեթեթի  
թատրոնը :

- Տրամաբանությունը ձախողած է, հարցերը չի լուծեր
- Լեզուն թերի է
- Լեզուն մարդոց կը կաշկանդէ
- Ընկերային յարաբերություններու կորիզը ոյժն է
- Իրապաշտ թատրոնը իրապաշտ չէ **the well-made play is unrealistic**

Քննադատությունը  
եւ անհերթի  
թատրոնը

- Մարտին Էսլինի *The Theatre of the Absurd* (1961) մինչեւ 21րդ դար, լարուածութիւն քաղաքական եւ ապաքաղաքական վերլուծումներու միջեւ
- Բնագանցական, էապաշտ, վերացական, տիեզերական անձը
- Քաղաքական քննադատութիւն, պատմական, երկիրներ
- “The Absurd of West European drama is the absurdity of existence. Socialist Absurd is the absurdity of the bureaucratic system, of the problems of daily life” (Hashamova on Bulgarian theater).

## Օրինակ՝ Ադասի Այվազեանի «Դեկորներ»ը

- 4 անանուն տիպարներ, պարապ բեմի մը վրայ կը փորձեն հասկնալ թէ ուր կը գտնուին
- Տեղը, կամ իր սահմանումը կը փնտռեն
- Գլխաւոր դեկորատորին օգնութեան կը դիմեն «տեղ ստեղծելու համար»
- Գլխաւոր դեկորատորը կը բերէ իրենց ուզած պատերը եւ կահ-կարասիները, բայց կը դժգոհին
- Բայց պարապութիւնը անհանգստութիւն կը պատճառէ
- 4 անգամ այս տեսարանը կը կրկնուի, տարբեր դեկորներ եւ պատեր կ'ուզուին, 4 անգամ կը ձախողին
- Տեղը տեղ չէ
- Վերջաւորութեան կ'անդրադառնան որ առաստաղ պէտք ունին
- Գլխաւոր դեկորատորը եւ իր օգնականները առաստաղը կը բերեն, բայց ան «կերկտակէ բոլորին»
- կը նմանի Բեքթի «Սպասելով Կոտոյին», բայց բոլորովին անյոյս տարբերակն է

Ինչպե՞ս վերլուծել  
այս գործը:

- Մարդկության վիճակը (գոյության իմաստը, բնագանցական փնտռույթ)
- Հայաստանի տեղը, ծայրամասային դիրքը Խորհրդային Միության/ յետ-խորհրդային աշխարհին մեջ
- Հայ գրականության տեղը համաշխարհային գրականության մեջ (meta-literary)

## Պատմական շրջարկը

- Այվագեան. «երկրաշարժը ստեղծեց այս պիեսը, բայց այս պիեսը երկրաշարժի մասին չէ»
- Երկրաշարժի պատճառով 50,000 հոգի մեռավ 500,000 հոգի անտուն մնաց
- Առաջին մարդ: Գուցե այստեղ քաղաք էր... Ու երկրաշարժ եղավ:
- Վայրը եւ ժամանակը. երկրաշարժէն ետք Գորբաչովեան վերակառուցումը, ազատագրական շարժումներ, ԽՄ փլուզումը, Ղարաբաղի պատերազմը
- Երկրորդ մարդ: նախկին տեղ է
- Տիպարներուն անձնական գոյութենական պայքարը կապուած է երկիր կառուցելու, երկրի գոյութեան հետ

## Քաղաքական վերլուծումներ

- Իւրաքանչիւր պատկեր որպէս նոր քաղաքական համակարգ
- Ընդհանրական երեւոյթ. Prop Manager symbol for the dual nature of power (productive and repressive)
- Ազգային. Գլխաւոր դեկորատորը է Ռուսիոյ դերը անդրկոլկասի մէջ
- Քաղաքական գոյութեան պայքարը գրական պայքար է

Վերջին  
պատկերին  
բնագանցական  
հարցումները

- Երկրորդ մարդ. Մարդկային բանականությունը իր մեջ բովանդակում է ապրելու իմաստը: (reason)
- Բան արմատը. Ճշմարտաբան, շիտակաբանություն, համաբանություն
- Առաջին մարդ. Ի սկզբանե էր ճշմարտությունը / Ի սկզբանե էր Բանն և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն
- Հոգեկան սնունդի պակաս Sudden realization that they lacked spiritual sustenance all along
- Քաղաքական բարեկարգումը չյաջողիր, կը դառնան դեպի կրօնը
- Լեզուն գաղափարական անհեթեթ գործիք է (քաղաքական, կրօնական)
- Ուժը եւ տեղը կը սահմանեն մարդկային էությունը
- Էություն փնտռությունը ապաքաղաքական չի կրնար ըլլալ- չկայ քաղաքականությունէ անջատուած ընդհանրական էություն իմաստ

# Վերլուծումին արդիւնքը

- Հրատարակուած 1999ին
- Համայնավարութեան հետքերը կը կաշկանդեն տիպարները:
- Ներկայ ազատութեան (ան)կարելիութիւնը կապուած է ճնշումի եւ գերիշխանութեան պատմութեան հետ:
- Ազատութիւնը կը բերէ նոր ստորադասութիւն (ուրիշէ կախեալ ըլլալու դրութիւնը):
- Ուժի յարաբերութիւնները եւ ոչ իմաստներու յարաբերութիւնները պատմութիւնը կը ղեկավարեն, կորոշեն:
- Թատրերգութեան քաղաքական թերահաւատութիւնը կարելի է կիրառել որպէս քննադատութիւն համաշխարհային գրականութեան տեսութեան Play's political skepticism can be extended to offer a critique of the paradigms of world literature, which tend to obscure the workings of geopolitical power
- Կրնային ըսել որ «Դեկորներ»ը յետ-խորհրդային հայ իրականութիւնը կ'արտացոլէ կամ Եւրոպական անհեթեթի ազդեցութիւնը կը կրէ, բայց այս ձեւով գործը (փոքր մշակոյթը) պիտի մնար առանց տեղի:
- Ինչո՞ւ կարդալ, բեմադրել կամ վերլուծել զայն:
- Ուժի բեմականացումը. ուժը բեմին վրայ քարտիսելով ընդհանրական, համաշխարհային եւ ազգային գրականութեան միջեւ սահմանները կոչնչանան:
- Տիպարներուն գոյութիւնը/եութենական հարցերը, Հայաստանի յետ-խորհրդային երկրի կերտումը, համաշխարհային գրականութիւն ընթերցելու միջոցները:



Այլ  
օրինակներ